



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ

**Հ Ր Ա Մ Ա Ն Ը**

13.11.2013 թվականի N.171-Ն

**ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ  
ԱՌԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2012թ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 38-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ խողվածի 18-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն և 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 1096-Ն հրամանները

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2012 թվականի հունիսի 8-ի  
<<< էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում ներքին աուդիտի կոմիտե  
ձևավորելու մասին>> N° 38-Ա հրամանով հաստատված հավելված 1-ում կատարել հետևյալ  
լրացումները՝


1. 16-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ ենթակետով՝

<< 7)Ներքին աուդիտի Կոմիտեն քննարկում է այն հարցերը, որոնք ներկայացվում են  
ներքին աուդիտի Կոմիտեի նիստի քննարկման: Ներքին աուդիտի ստորաբաժանման  
ղեկավարը նախքան նշված հարցերը ներքին աուդիտի Կոմիտեի քննարկմանը ներկայացնելը  
քննարկում է նախարարի հետ:

Ներքին աուդիտի Կոմիտեի անդամները միայն Կոմիտեի քննարկմանը ներկայացվող  
հարցերի շուրջ կարող են դիմել ներքին աուդիտի ստորաբաժանմանը պարզաբանումներ

ստանալու համար: Եթե պարզաբանումների համար անհրաժեշտ է գաղտնի բնույթի տեղեկատվություն, ապա դրա տրամադրումը պետք է իրականացվի միայն նախարարի գրավոր թույլտվության առկայության դեպքում: << օրենսդրությամբ սահմանված կարգով գաղտնի ճանաչված տեղեկատվությունը ներքին աուդիտի Կոմիտեն քննարկում է դռնփակ նիստի ընթացքում:

2. 25-րդ կետի 3-րդ ենթակետը լրացնել հետևյալ նախադասությամբ. <<Կոմիտեի անդամ՝ աշխատակազմի ղեկավարը իրավունք չունի մասնակցելու միայն աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին վերաբերվող որոշումների ընդունման քվեարկությանը:>>:



**Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ**